# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

375015, Երեւան 15, Գրիգոր Լուսավորչի 13

№ 2565-Ա «18» դեկտեմբերի 2002թ.

## ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԵՎՏՐԻ (ՍՊԱՍԱՐԿՄԱՆ) ԿՐՊԱԿՆԵՐԻ (ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ) ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿՐՊԱԿՆԵՐԻ (ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ) ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 5-րդ կետով, ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի «Պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին» հ.286 որոշմամբ հաստատված կարգի 36-րդ հոդվածի «գ» ենթակետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2001թ դեկտեմբերի 14-ի «Մինչև 20քմ մակերես ունեցող տաղավարների, կրպակների, առևտրի ու սպասարկման այլ օբյեկտների տեղադրման թույլտվության գործառույթի կիրառումն ապահովելու միջոցառումները կարգավորելու մասին» հ.1567 որոշումը.

1.Գոյություն ունեցող, իրավական հիմքերով տեղադրված, առևտրի (սպասարկման) կրպակների (տաղավարների) զբաղեցրած հողամասերը, վարձակալության իրավունքով, հինգ տարի ժամկետով տրամադրել կրպակների (տաղավարների) սեփականատերերին՝ ըստ սույն որոշման հավելվածի:

2.Սահմանել, որ տրամադրվող հողամասերի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծերով:

3.Լիազորել Երևանի համապատասխան թաղային համայնքի ղեկավարին՝ Երևանի քաղաքապետի անունից հողօգտագործողների հետ կնքել վարձակալության պայմանագրեր, որոնք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն ենթակա են նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային մարնում:

4.Ընդունել ի գիտություն, որ.

4.1.Երևանի համապատասխան թաղային համայնքի հետ, գլխավոր հատակագծի թողարկման պահից, 60-օրյա ժամկետում վարձակալության պայմանագիր չկնքելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4.2.Սույն որոշման հավելվածի 6-րդ սյունակով ներկայացված պահանջները (կրպակների (տաղավարների) արդիականացում) ենթակա են պարտադիր կատարման:

4.3.Արդիականացվող կրպակների (տաղավարների) նախագծային փաստաթղթերի մշակման և համաձայնեցման համար սահմանվում է վեց ամիս ժամկետ:

4.4.Արդիականացվող կրպակների (տաղավարների) նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հետ:

5. Պարտավորեցնել վարձակալներին՝ տրամադրված հողամասերն օգտագործել միայն սույն որոշմամբ սահմանված նպատակներով և պայմաններով:

6.Հանձնարարել Երևանի համապատասխան թաղային համայնքի ղեկավարին՝ արդիականացման ենթակա կրպակների (տաղավարների) սեփականատերերի հետ կնքել քաղաքացիաիրավական պայմանագիր՝ նախագծով նախատեսված կրպակի (տաղավարի) տեղադրման ավարտի ժամկետը վարձակալի մեղքով խախտվելու դեպքում գույքային պատասխանատվություն սահմանելու մասին:

7.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությանը (Ս.Կոտոլիկյան)՝ ապահովել սույն որոշման կատարման ընթացքում ՀՀ իրավական ակտերով նախատեսված քաղաքաշինական փաստաթղթերի ընդունումը և համապատասխան ձևակերպումների կատարումը:

8.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետաշինարարական վերահսկողության վարչությանը (Հ.Մուրադյան)՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածի և ՀՀ կառավարության 12.10.1998թ. հ.624 որոշման համաձայն վարձակալի՝ սույն որոշմամբ նախատեսված քաղաքաշինական գործունեության նկատմամբ իրականացնել պետական վերահսկողություն:

9.Նախազգուշացնել արդիականացման ենթակա կրպակների (տաղավարների) սեփականատերերին, որ սույն որոշման կայացումից հետո, մեկ տարվա ընթացքում նոր կրպակը (տաղավարը) չտեղադրելու, ինչպես նաև որոշմամբ ներկայացված պահանջները չկատարելու դեպքում սույն որոշումը կճանաչվի անվավեր:

10. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության (Ա.Ղազարյան) վրա:

11. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Վ.Վարդապետյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ՍՇ

ՀԱՎԵԼՎԱԾ
Երևանի քաղաքապետի
2002թ. դեկտեմբերի 18-ի
N 2565-Ա որոշման

# Ց Ա Ն Կ
## Գոյություն ունեցող կրպակների /տաղավարների/ զբաղեցրած և տրամադրվող հողամասերի

| N | Քաղաքացու կամ իրավաբանական անձի անվանումը | Օբյեկտի հասցեն | Օբյեկտի զբաղեցրած հողամասի մակերեսը | Օբյեկտի տեղադրման թույլտվության հիմքը | Օբյեկտների սեփականա-տերերին ներկայացվող պարտադիր պահանջներ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Թորգոմ Նալբանդյան | Ագաթանգեղոսի փող. h. 7 շենքին կից | 6.0 քմ | Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական h. 663198 առ 24.07.2001թ. | Արդիականացնել |
| 2 | Անհատ ձեռնարկատեր Կարինե Սարգսյան | Գայի պող. թիվ 7 շուկայի դիմացի մայթին | 6.0 քմ | Նոր Նորքի թաղապետի 05.12.2000թ. h.246 որոշում | Արդիականացնել |
| 3 | Անհատ ձեռնարկատեր Էմմա Եղիազարովա | Նոր Նորքի 2-րդ զանգվ. Ստեփանյան փող. հարակից տարածքում | 9.0 քմ | Նոր Նորքի թաղապետի 10.12.1998թ. h.376 որոշում | Արդիականացնել |
| 4 | «Տիգրան և Միրվարդ» ՍՊԸ | Գ. Նժդեհի փող. h. 4 շենքի մոտ | 3.5 քմ | Երևանի քաղաքապետի 30.04.1998թ. h.40 կարգադրություն | ----- |
| 5 | Նարինե Ղազարյան | Նոր Նորքի 2-րդ զանգվ. Ստեփանյան փող. սկզբնամասում | 12.0 քմ | Նոր Նորքի թաղապետի 16.06.1999թ. h.131 որոշում | Արդիականացնել |
| 6 | Նոնա Ղազարյան | Նոր Նորքի 2-րդ զանգվ. Ստեփանյան փող. սկզբնամասում | 12.0 քմ | Նոր Նորքի թաղապետի 18.06.1999թ. h.132 որոշում | Արդիականացնել |
| 7 | Անուշ Մկրտչյան | Չեխովի փող. h. 17 շենքի հարևանությամբ | 12.0 քմ | Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական h. 548644 առ 10.01.2001թ. | Արդիականացնել |
| 8 | Լևիկ Փաշոյան | Աթոյան և Այվազովսկու փողոցների հատման հատվածում | 18.0 քմ /6.0+12.0/ | Էրեբունու թաղապետի 29.03.1999թ. h. 42 և h. 43 որոշումներ | ----- |
| 9 | Անհատ ձեռնարկատեր Էլմիրա Եղիազարյան | Գայի պող. և Նանսենի փող. հատման մասից 30մ վերև | 20.0 քմ | Երևանի քաղաքապետի 30.08.1996թ. h. 212 կարգադրություն | Արդիականացնել |
| 10 | «ԽԱՉԻԿ ԵՎ ՈՐԴԻ» ՍՊԸ | Փափազյան փող. h. 22ա և h. 24 շենքերի հարևանությամբ | 16.0 քմ | Արաբկիրի թաղապետի 31.03.1999թ. h.28 որոշում | ----- |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11 | Ծովինար Անդրեասյան | Զրվեժ «Բանավան» թաղամասի h. 2 շենքի հարևանությամբ | 15.0 քմ | Նոր Նորքի թաղապետի 11.02.1999թ. h. 24 որոշում | Արդիականացնել |
| 12 | Խաչո Փանոսյան | Ն. Նորքի 9-րդ զանգվ. h. 3 շենքին հարող տարածքում | 20.0 քմ | Նոր Նորքի թաղապետի 29.05.2000թ. h.86 որոշում | Արդիականացնել |
| 13 | Կարապետ Սահակյան | Նար-Դոսի փող. h. 77 շենքի դիմաց | 15.0 քմ | Երքաղխորհրդի գործկոմի 15.12.1995թ. h.47/17 որոշում | Արդիականացնել |
| 14 | Յուրա Սարոյան | Նար-Դոսի փող. h. 77 շենքի դիմաց | 19.0 քմ | Երքաղխորհրդի գործկոմի 14.07.1995թ. h.25/14 որոշում | Արդիականացնել |
| 15 | Անհատ ձեռնարկատեր Մարինե Դավթյան | Նոր Նորքի 6-րդ զանգված «Ունիվերսամ»-ի դիմացի կրպակաշարում | 18.0 քմ | Նոր Նորքի թաղապետի 04.11.1998թ. h.344 որոշում | Արդիականացնել |
| 16 | Անհատ ձեռնարկատեր Գառնիկ Սարոյան | Նար-Դոսի փող. h.77 շենքի դիմաց | 18.5 քմ | Երքաղխորհրդի գործկոմի 14.07.1995թ. h. 25/14 որոշում | Արդիականացնել |
| 17 | Անհատ ձեռնարկատեր Ղազար Գաբրիելյան | Տիգրան Մեծի պող. h. 27ա շենքի կամարանցում | 4.80 քմ | Կենտրոնի թաղապետի 08.06.1999թ. h.23/269 որոշում | Արդիականացնել |
| 18 | «Քրիստել» ՍՊԸ | Հանրապետության փող. h. 75 հասցեում | 8.0 քմ | Կենտրոնի թաղապետի 27.05.1999թ. h.23/255 որոշում | Արդիականացնել |
| 19 | Էմիլ Սարոյան | Նար-Դոսի փող. h.75 շենքի հասցեում | 16.5 քմ | Երքաղխորհրդի գործկոմի 29.07.1994թ. h. 32/11 որոշում | Արդիականացնել |
| 20 | Անհատ ձեռնարկատեր Սերյոժա Կարապետյան | Սայաթ-Նովա փող. h. 10 շենքի դիմաց | 6.25 քմ | Երևանի քաղաքապետի 06.11.1996թ. h. 328 որոշում | Արդիականացնել |
| 21 | Անհատ ձեռնարկատեր Ռոմեն Տերտերյան | Նար-Դոսի փող. h.77 շենքի դիմաց | 17.0 քմ | Մյասնիկյանի շրջսովետի գործկոմի 16.01.1992թ. h. 1/30 որոշում | Արդիականացնել |
| 22 | Աշոտ Ջհիրաբյան | Բրյուսովի փող. h. 165 շենքի բակում | 6.0 քմ | Երևանի քաղաքապետի 18.10.1996թ. h. 285 կարգադրություն | ----- |
| 23 | Անհատ ձեռնարկատեր Էլբրուս Սնդրակյան | Հր. Քոչարի փող. h. 15 շենքի հարակից մասում | 6.0 քմ | Երքաղխորհրդի գործկոմի 01.12.1995թ. h. 45/11 որոշում | Արդիականացնել |
| 24 | Մանուշակ Մկրտչյան | Նոր Նորքի թիվ 7 շուկայի թիկունքային հատվածում | 16.7 քմ | Երևանի Խորհրդային շրջխորհրդի գործկոմի 24.11.1994թ. h. 92 որոշում | Արդիականացնել |
| 25 | Գագիկ Գրիգորյան | Նոր Նորքի թիվ 7 շուկայի մուտքի կրպակաշարում | 19.9 քմ | Երքաղխորհրդի գործկոմի 02.12.1994թ. h. 51/9 որոշում | Արդիականացնել |
| 26 | Անհատ ձեռնարկատեր Գասպար Գևորգյան | Գայի պող. ունիվերսամի դիմաց | 9.36 քմ | Երևանի քաղաքապետի 18.10.1996թ. h. 285 կարգադրություն | Արդիականացնել |
| 27 | Անհատ ձեռնարկատեր Աղասի Տեր-Եսայան | Գլխավոր պողոտայի և Մարգարյանի անվ. հիվանդանոցի հարակից տարածքում | 20.0 քմ | Կենտրոնի թաղապետի 20.04.1999թ. h. 23/185 որոշում | ----- |
| 28 | Թեյման Վանունի | Բաղրամյան պող. h. 77 շենքին հարող տարածքում | 6.0 քմ | Երքաղխորհրդի գործկոմի 16.06.1995թ. h. 21/4 որոշում | ----- |